

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 նոյեմբերի 2005 թվականի N 1925-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «դ» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի «ը» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի մարտի 22-ի «Քաղաքացիական պաշտպանության՝ բնակչությանը կենտրոնացված ազդարարման համակարգի գործունեության կարգավորման մասին» N 122 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի  
Հանրապետության  
վարչապետ

Ա. Մարգարյան

2005 թ. նոյեմբերի 17  
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ԱՌԱՋԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների ու ռազմական դրության պայմաններում և հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում բնակչությանն ազդարարելու գործընթացը:

2. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

ա) *ազդարարման ազդանշան*՝ ազդարարման համակարգով տրվող պայմանական նշան, որը հրահանգ է կառավարման մարմիններին, քաղաքացիական պաշտպանության շտաբներին, ծառայություններին, ուժերին և բնակչությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար,

բ) *օդային տազնապ*՝ տրվում է բնակչությանը նախազգուշացնելու համար՝ հակառակորդի կողմից տվյալ բնակավայրի (տարածքի) վրա օդային հարձակման անմիջական սպառնալիքի դեպքում,

գ) *օդային տազնապի ավարտ*՝ տրվում է բնակչությանը նախազգուշացնելու համար՝ հակառակորդի կողմից տվյալ բնակավայրին (տարածքին) հարձակման սպառնալիքի վերացման դեպքում,

դ) *ճառագայթային վտանգ*՝ տրվում է բնակչությանը նախազգուշացնելու համար՝ տվյալ բնակավայրի (տարածքի) ռադիոակտիվ աղտոտվածության անմիջական սպառնալիքի կամ այդպիսի աղտոտվածության հայտնաբերման դեպքում,

ե) *քիմիական տազնապ*՝ տրվում է բնակչությանը նախազգուշացնելու համար՝ տվյալ բնակավայրի (տարածքի) քիմիական, մանրէաբանական վարակման սպառնալիքի կամ այդպիսի վարակվածության հայտնաբերման դեպքում,

զ) *աղետալի ջրածածկում*՝ տրվում է բնակչությանը նախազգուշացնելու համար՝ տվյալ բնակավայրի (տարածքի) ջրածածկման սպառնալիքի դեպքում,

է) *հակառակորդի հարձակման սպառնալիքի ազդանշան*՝ տրվում է Հայաստանի Հանրապետության դեմ ռազմական գործողությունների սկսման կամ զենքի կիրառման ակնհայտ սպառնալիքի դեպքում:

3. Ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման պայմաններում կիրառվում են «Օդային տազնապ», «Օդային տազնապի ավարտ», «Ճառագայթային վտանգ» և «Քիմիական տազնապ», իսկ արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի կամ ծագման դեպքում՝ «Ճառագայթային վտանգ»,

«Քիմիական տագնապ» և «Աղետալի ջրածածկման վտանգ» ազդարարման ազդանշանները:

4. Ազդարարման ազդանշանները տրվում են կապի և ազդարարման բոլոր միջոցներով՝ շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ, միացվում են էլեկտրաշաղկները, և տրվում է անընդհատ («Օդային տագնապ» ազդանշանի դեպքում՝ տատանվող), երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան: Միաժամանակ ազդարարման միջոցներով՝ 2-3 րոպե տևողությամբ տրվում է հետևյալ բովանդակությամբ համապատասխան տեքստային հաղորդագրություն. «Ուշադրություն, ուշադրություն ... »: Անհրաժեշտության դեպքում հաղորդագրությունը լրացվում է «Վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին՝...» բառերով:

5. Բնակչությանն ազդարարելու մասին որոշումներն ընդունում են՝

ա) հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներում արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ կազմակերպության ղեկավարը: Հայկական ատոմային էլեկտրակայանում (այսուհետ՝ ՀԱԷԿ) արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ նախահարձակ պաշտպանական միջոցառումների գոտու (ՀԱԷԿ-ին հարակից մինչև 5 կիլոմետրանոց գոտի) նախնական ազդարարման մասին որոշումն ընդունում է ՀԱԷԿ-ի հերթափոխի պետը, շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտում (ՀԱԷԿ-ին հարակից 5-10 կիլոմետրանոց գոտի) գտնվող բնակչությանն ազդարարելու մասին որոշումը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը: Զրամբարի պատվարի փլուզման դեպքում՝ ազդարարման մասին որոշումն ընդունվում է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) օպերատիվ ծառայության կողմից:

բ) համայնքային նշանակության արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ համայնքի ղեկավարը:

գ) մարզային նշանակության արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ մարզպետը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը):

դ) հանրապետական նշանակության արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը:

ե) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը (Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա):

6. Բնակչության ազդարարումն իրականացնում են՝

ա) հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտներում արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ կազմակերպության ղեկավարը՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայության միջոցով: ՀԱԷԿ-ում արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ նախահարձակ պաշտպանական միջոցառումների գոտում գտնվող բնակչության նախնական ազդարարումն իրականացնում է ՀԱԷԿ-ի հերթապահ

ծառայությունը, իսկ շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտու բնակչությանն ազդարարումը՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը:

բ) համայնքային նշանակության արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ համայնքի ղեկավարը:

գ) մարզային նշանակության արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը:

դ) հանրապետական նշանակության արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը:

ե) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը:

7. Ազդարարման մասին որոշումների ընդունման նպատակով արտակարգ իրավիճակների դասակարգման չափանիշները սահմանվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառում լիազորված պետական մարմնի ղեկավարի կողմից:

#### **Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար**